

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի ուղերձը Գրադարանավարի օրվա կապակցությամբ

07.10.2014



Գրադարանային համակարգի հարգելի աշխատողներ

Ձերմ շնորհավորանքներս ու բարեմաղթանքներս եմ հղում Վայոց ձորի մարզային գրադարանի, համայնքային և դպրոցական գրադարանների աշխատակիցներին մասնագիտական տոնի՝ Գրադարանավարի օրվա կապակցությամբ:

Գրադարանները գրքի ու գրականության շտեմարաններն են, մտքի գանձերի պահպանման սուրբ օջախները, այն օջախները որտեղ ամբարվում են հանճարների ստեղծած մտավոր գանձերը:

Գիրքն է, որ հնարավորություն է ընձեռում ընթերցողին հաղորդակցվելու անցյալի փորձին, ճանաչելու աշխարհն ու շրջակա միջավայրը, պատկերացումներ կազմելու, ապագայի մասին, իմանալու „Բանն հանճարոյ,“:

Մաղթում եմ, որպեսզի ինչպես մարզային, նմանապես և համայնքային գրադարանները պատվով կատարեն իրենց առջև դրված առաջադրանքները, աշխատանքի նկատմամբ ցուցաբերեն ստեղծագործական մոտեցում և վայելեն ոչ միայն ընթերցողների, այլև մարզի մտավորականության հարգանքն ու սերը:

Հարգելի գրադարանավարներ, կրկին անգամ շնորհավորում եմ Ձեզ Գրադարանավարի օրվա կապակցությամբ, մաղթում եմ աշխատանքային հաջողություններ ձեր պատասխանատու ու պատվաբեր աշխատանքում, իսկ Ձեր ընտանիքներին սեր և բարօրություն: